Արձանագրություն N 2

2025 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ հակաուռուցքային դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» «Ապրիլի» 2025թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 10.03.25թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2025 թվականի մարտի 21-ին, ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի մարտի 24-ին ժամը 11:00-ին: 2025 թվականի մարտի 25-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	tender@theopharma.am	00471216
2	«Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ	arg.aj@mail.ru	22823566

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Թեոֆրամա Իմպորտ» և «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ԱՊԸ-ների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ «Թեոֆրամա Իմպորտ» և «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ԱՊԸ-ների կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում գնահատող հանձնաժողովը արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց 04.04.2025թ. կասեցնել հայտերի գնահատումը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին համապատասխան շտկումներ անելու մասին՝

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (տեխնիկական բնութագրերը) մասնավորապես՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով շտկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների (դեղերի) հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները և արտադրողի անվանումները: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

«Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է անհամապատասխանություններ, որոնք ենթակա են շտկման: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) մասնավորապես՝ 6-րդ և 9-րդ չափաբաժինների մասով շտկել և ճիշտ ներկայացնել Ձեր կողմից առաջարկվող ապրանքների (դեղերի) հստակ ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները և արտադրողի անվանումները: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Սահմանված ժամկետում «Թեոֆարմա Իմպորտ» և «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ների կողմից պահանջվող շտկումները կատարված էին և ապրանքի ամբողջական նկարագրերի (տեխնիկական բնութագրերի) ճշտված տարբերակները ներբեռնված էին էլեկտրոնային աճուրդ համակարգ և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

Որոշվեց.

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ «Թեոֆրամա Իմպորտ» և«Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ԱՊԸ-ների հայտերը գնահատել բավարար:

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով առաջարկվել են ՀՀ-ում չգրանցված դեղեր և քանի որ սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված է, որ ընթացակարգի և հետագայում վերջինիս շրջանակում կնքվելիք պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են 02.05.2013թ. ՀՀ Կառավարության 502-Ն որոշման պահանջները, ուստի նշված որոշման 2.2 կետի համաձայն հաղթող մասնակիցները պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ չգրանցված դեղերի համար պարտադիր ներկայացնում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 172-Ա

որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության կամ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում գրանցված լինելու, կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու, ինչպես նաև «Դեղերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 17-րդ կետով սահմանված ներմուծման մերժման հիմքերի բացակայության մասին տեղեկատվություն: Ելնելով վերոգրյալից «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 1-ին և 4-րդ չափաբաժիններով ներկայացված չգրանցված դեղերի համար պայմանագիր կնքելուց կպահանջվեն վերոգրյալ օրենսդրական պահանջներով փաստաթղթերը և պայմանագրում կներառվեն հրավերի պահանջներին համապատասխանող ապրանքները (դեղերը):

«Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի «Մետոտրեքսատ 50 մգ» դեղի մասով առաջարկվել են ինչպես ՀՀ-ում գրանցված, այնպես էլ չգրանցված դեղեր և քանի որ սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված է, որ ընթացակարգի և հետագայում վերջինիս շրջանակում կնքվելիք պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են 02.05.2013թ. ՀՀ Կառավարության 502-Ն որոշման պահանջները, ուստի նշված որոշման 2.1 կետի համաձայն՝ պատվիրատուն ձեռք է բերում Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր, իսկ «Դեղերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին, 4-րդ և 7-րդ կետերում նշված դեպքերում՝ 21-րդ հոդվածի 8-րդ մասի 17-րդ կետով սահմանված ներմուծման մերժման հիմքերի բացակայության դեպքում՝ նաև չգրանցված դեղեր: Ընդ որում, սույն կետով սահմանված չգրանցված դեղերը պետք է գրանցված լինեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության կամ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում կամ ունենան Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում: Ելնելով վերագրյալից 6-րդ չափաբաժնի մասով պայմանագրում կներառվի միայն ՀՀ ում գրանցված դեղը: 9-րդ չափաբաժնի «Հիդրոքսիկարբամիդ 500մգ» դեղեի մասով առաջարկվել են ՀՀ-ում չգրանցված դեղեր և քանի որ սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված է, որ ընթացակարգի և հետագայում վերջինիս շրջանակում կնքվելիք պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են 02.05.2013թ. ՀՀ Կառավարության 502-Ն որոշման պահանջները, ուստի նշված որոշման 2.2 կետի համաձայն հաղթող մասնակիցները պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ չգրանցված դեղերի համար պարտադիր ներկայացնում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության կամ ԵԱՏՄ անդամ հանդիսացող երկրներում գրանցված լինելու, կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու, ինչպես նաև «Դեղերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 17-րդ կետով սահմանված ներմուծման մերժման հիմքերի բացակայության մասին տեղեկատվություն: Ելնելով վերոգրյալից «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 9-րդ չափաբաժնով ներկայացված չգրանցված դեղերի համար պայմանագիր կնքելուց կպահանջվեն վերոգրյալ օրենսդրական պահանջներով փաստաթղթերը և պայմանագրում կներառվեն հրավերի պահանջներին համապատասխանող ապրանքները (դեղերը):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 24.03.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

- «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով.
- «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ն՝ 6-րդ և 9-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթողներ ճանաչել և կնքել պայմանագրեր՝
   - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով, 10,267,200 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
   - «Ար Ջի Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ-ն՝ 6-րդ և 9-րդ չափաբաժնի մասով, 11,640,600 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել մնացած չափաբաժինների մասով հայտերը:

3. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 2-րդ, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 10-17-րդ չափաբաժինների մասով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:
4. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/29» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 10.04.2025թ.-ից մինչև 19.04.2025թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2025 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք օնկո դեղերի վերաբերյալ 25.11.2022թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ					«Ար Ջր Ընդ Էյ Ջեյ Գրուպ» ՍՊԸ				
					Վերջնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Ցիկլոֆոսֆամիդ 200մգ	390	2,500.00	975,000.00	730,000.00	146,000.00	876,000.00	1,871.79	2,246.15	754,000.00	150,800.00	904,800.00	1,933.33	2,320.00
2	Դակտինոմիցին 0.5մգ	80	20,000.00	1,600,000.00	1,680,000.00	336,000.00	2,016,000.00	21,000.00	25,200.00	1,733,333.34	346,666.66	2,080,000.00	21,666.67	26,000.00
3	Դաունոռուբիցին 20մգ	250	9,000.00	2,250,000.00	3,562,500.00	712,500.00	4,275,000.00	14,250.00	17,100.00	3,125,000.00	625,000.00	3,750,000.00	12,500.00	15,000.00
4	Դոքսոռուբիցին 50մգ	1,204	7,800.00	9,391,200.00	7,826,000.00	1,565,200.00	9,391,200.00	6,500.00	7,800.00	13,545,000.00	2,709,000.00	16,254,000.00	11,250.00	13,500.00
5	Էտոպոզիդ 20մգ/մլ, 5մլ	373	3,201.07	1,193,999.11	1,585,250.00	317,050.00	1,902,300.00	4,250.00	5,100.00	1,547,950.00	309,590.00	1,857,540.00	4,150.00	4,980.00
6	Մետոտրեքսատ 50մգ	435	4,200.00	1,827,000.00	2,175,000.00	435,000.00	2,610,000.00	5,000.00	6,000.00	1,522,500.00	304,500.00	1,827,000.00	3,500.00	4,200.00
7	Վինկրիստին 1մգ	1,100	4,500.00	4,950,000.00	7,425,000.00	1,485,000.00	8,910,000.00	6,750.00	8,100.00	5,775,000.00	1,155,000.00	6,930,000.00	5,250.00	6,300.00
8	Վինբլաստին 5մգ	50	54,000.00	2,700,000.00			0.00	0.00	0.00	2,916,666.67	583,333.33	3,500,000.00	58,333.33	70,000.00
9	Հիդրոքսիկարբամիդ 500մգ	120,000	84.00	10,080,000.00	8,289,000.00	1,657,800.00	9,946,800.00	69.08	82.89	8,178,000.00	1,635,600.00	9,813,600.00	68.15	81.78
10	Իրինոտեկան 100մգ	25	8,640.00	216,000.00	312,500.00	62,500.00	375,000.00	12,500.00	15,000.00	325,000.00	65,000.00	390,000.00	13,000.00	15,600.00
11	Ցիսպլատին 1մգ/մլ 50մլ	110	4,996.36	549,599.60	742,500.00	148,500.00	891,000.00	6,750.00	8,100.00	751,666.67	150,333.33	902,000.00	6,833.33	8,200.00
12	Միտոքսանտրոնի հիդրոքլորիդ 2մգ/մլ; ապակե սրվակ 10մլ	12	60,000.00	720,000.00			0.00	0.00	0.00	900,000.00	180,000.00	1,080,000.00	75,000.00	90,000.00
13	Կարբոպլատին 150մգ	170	7,800.00	1,326,000.00	1,700,000.00	340,000.00	2,040,000.00	10,000.00	12,000.00	2,054,166.67	410,833.33	2,465,000.00	12,083.33	14,500.00
14	Կարբոպլատին 450մգ	40	16,000.00	640,000.00	770,000.00	154,000.00	924,000.00	19,250.00	23,100.00	766,666.67	153,333.33	920,000.00	19,166.67	23,000.00
15	Բլեոմիցին 15մգ	40	12,600.00	504,000.00	570,000.00	114,000.00	684,000.00	14,250.00	17,100.00	650,000.00	130,000.00	780,000.00	16,250.00	19,500.00
16	Վինդեզին 5մգ	30	214,960.00	6,448,800.00			0.00	0.00	0.00	8,750,000.00	1,750,000.00	10,500,000.00	291,666.67	350,000.00
17	Իդառուբիցին 5մգ	30	70,000.00	2,100,000.00			0.00	0.00	0.00	2,750,000.00	550,000.00	3,300,000.00	91,666.67	110,000.00